


Ն. Կ. ԼԵՐԵՂԵՎ



ԱՐԽԱՆԳԵԼՍԿԻ ՌՈՐԻՆՋՈՆՆԵՐԸ

ՊԵՏՅՐԱՏ 1937 ՅԵՐԵՎԱՆ

31 JAN 2018

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

891.99-93

Ն. Կ. ԼԵՖԵԴԵՎ

ԱՐԽԱՆԳԵԼՍԿԻ ՌՈՒՄԵՆԶՈՆՆԵՐԸ

ՊԱՏՄՎԱԾԻ

ՉՈՐՍ ՅԵԶՐԱԲՆՈՎՆԵՐԻ ԱՐԿԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ՀՅՈՒՄԻՍՏՈՑԻՆ ԲԵՎԵՌՈՑԻՆ ԾՈՎԻ
ՍՆԲՆԱԿ ԿՂԶՈՒՄ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԾՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1937

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
Ո՞վ եր Ռոբինզոնը	5
Բեվեռային ծովը	5
Ինչո՞վ են հարուստ բեվեռային յերկրները	10
Նավաբեկյալները	19
Մենակ՝ սառցե անապատում	22
Յերկրորդ ամեռումը	28
Փրկությունը սառցի գերությունից	31

Թարգմանիչ՝ Հ. Լևոնյան
 Պատ. խմբագիր՝ Ա. Ոգանեզով
 Սրբագրիչ՝ Ս. Շահրազյան
 Տեխ. խմբագիր՝ Ի. Վարդանյան

Գլավխոտի լիազոր Կ— 4621, Պատվեր 862
 Հրատ. 4137. Տիրաժ 4000. Թուղթ

Յերեվան, Պետհրատի տպարան, Լենինի, 65



11-28585914

Ո՞վ եր ՌՈՒԲԻՆԶՈՆԸ

Ռոբինզոնն են կոչում ամեն մարդու, ով ընկնում է մի վորեւե անբնակ տեղ և ապրում այնտեղ բոլորովին մենակ: Այս անունը գալիս է մի անգլիացի նավաստուց՝ Ռոբինզոն Կրուզոյից, վորի պատմությունը հնարել ու նկարագրել է մի անգլիացի գրող սրանից յերկու հարյուր տարի առաջ:

Ռոբինզոն Կրուզոն նավի խորտակումից հետո ընկավ մենակ մի անբնակ կղզի: Իր քաջության և հնաքաղիտության շնորհիվ նա չմեռավ, այլ կղզում փայրեց շատ տարիներ և սովորեց ինքն անել կյանքի համար անհրաժեշտ զանազան բաներ:

Մեր գրքույկում մենք պատմում ենք վոչ թե Ռոբինզոնի հնարովի պատմությունը, այլ ճշգրիտ յեղեջություն Արխանգելսկի չորս արհեստագործ յեղբայրանների մասին: Նրանք ընկան մի ամայի սառցա կղզի և այնտեղ ամբողջ վեց տարի ապրեցին բոլորովին մենակ:


ԲԵՎԵՌԱՅԻՆ ԾՈՎԸ

1743 թվի հունիսին Արխանգելսկի նահանգի Մեզեն քաղաքից Սպիտակ ծովը դուրս յեկավ մի վոչմեծ առագաստանավակ:

Նավակում կային տասնչորս արհեստագործ յեղբայրանակներ: Նավակը ղեկավարում եր մոտ հիսուն

տարեկան մի մարդ, ավագ լոցման Ալեքսեյ Խիմկովը, մնացածներն ավելի յերիտասարդ եյին, բայց բոլորն ել ծով տեսած մարդիկ:


Հյուսիսում մարդուն վոչ թե հողը, այլ ծովն ե կերակրում: Ծովի ափերին ապրող մարդիկ — յեզրաբնակները — զբաղվում են ծովային արհեստներով և ձկնորսությամբ:



Բևեռային ծովի փարտեզը

Դեռևս հինգ հարյուր տարի սրանից առաջ ուս առաջին գաղթականները Սպիտակ ծովի ափին սկսեցին այդ արհեստները, և այդ ժամանակից նրանց թոռներն ու թոռների թոռները կերակրվում են ծովային վորսորդությամբ: Հողը հյուսիսում վատ ե հաց տալիս: Ամառը լինում ե կարճ և ցուրտ: Առանց ծովային արհեստի՝ մարդու համար դժվար կլինի ապրուստը հյուսիսային յերկրում:

Խիմկովն ու ընկերները գնում եյին ծովային արհեստի: Մի քանի տրից նրանց նավակը Սպիտակ ծովից դուրս յեկավ դեպի Բեվեռային կամ սառուցյալ ծովի յայն տարածությունը:



Բևեռային ծով

Այս ծովը նրա համար ե Սառուցյալ կոչվում, վոր նրա յերեսին տարին ամբողջ, ձմռանն ու ամառնը, լողում են մեծ սառցակտորներ և սառցասարեր: Սառուցյալ ցուրտ ծովը ձգվել ե ավելի քան չորս

հազար կիլոմետր յերկարությամբ և գրեթե նույնքան կիլոմետր լայնությամբ:

Այս ծովում շատ կան կղզիներ և ցամաքներ: Այդ կղզիները ծածկված են հավերժական ձյուն ու սառույցով: Այդտեղ տարեկան ամբողջ ինն ամիս իշխում է կատաղի ձմեռն իր դաժան սառնամանիքներով: Հոկտեմբերից մինչև փետրվար արևն այդտեղ գրեթե յերբեք չի յերեւում յերկնակամարի վրա: Այդ ամբողջ ժամանակամիջոցում հյուսիսում համատարած գիշեր է լինում: Գիշերվա խավարում մոլեգնում են ուժեղ բուքերը: Սառնամանիքը հասնում է հիսուն աստիճանի:

Բայց ամռանն ել հեռավոր հյուսիսում շատ բանով լավ չի, քան ձմռանը: Արևը թեպետ և հունիս և հուլիս ամիսներին գիշեր-ցերեկ յերկնակամարի վրա յե, բայց շատ ցածր է բարձրանում: Նրա շեղ ճառագայթները վատ են տաքացնում հողը և չեն կարող հալեցնել սառույցի ու ձյան ահագին շերտերը:

Ամռանը Բեվեռային ծովի կղզիներում հինգ-վեց աստիճանից ավելի տաքություն չի լինում, դրա համար ել այդտեղ գրեթե վոչինչ չի աճում: Միայն արևկող տեղերում է ձյունը դնում, և հողը մերկանում ու հալչում է, բայց կես մետրից վոչ ավելի: Այդպիսի տեղերում աճում են մոխրագույն մամուռը և կարճ, կոպիտ, վտիտ խոտը:

Այդ ամբողջ ընդարձակ մարզը, ուր գտնվում է հյուսիսային սառը ծովը, և այնտեղի բոլոր հողերն ու կղզիները կոչվում են հյուսիսային բեվեռային մարզ: Այդ մարզն այդպես է կոչվում, վորովհետև այդ մասումն է գտնվում յերկրագնդի հյուսիսային բեվեռը:

Ամենամեծ կղզիները Հյուսիսային Բեվեռային ծովի այն մասում, վորն ավելի մոտիկ է մեզ, Նոր Յերկիր կրկնակ կղզին է և Շպիցբերգեն, կամ, հին անունով, Գրումանտ կղզիները:

Նոր Յերկիրը հեռու յե գտնվում Արխանգելսկից: Արխանգելսկից մինչև Նոր Յերկիրը ծովով հազար կիլոմետրից ավելի յե: Իսկ Շպիցբերգեն կղզիները գտնվում են Նոր Յերկրից դեպի արևմուտք, մեր Մուրմանսկի ափունքի դեմ:

Նոր Յերկրի յերկարությունը գրեթե հազար կիլոմետր է, իսկ լայնությունը մի քանի տեղերում յերեսուն, մի քանի տեղերում ել մոտ հարյուր կիլոմետր: Նա պատված է բարձր ապառաժ-սարերով:

Յեթե նավարկելու լինենք Նոր Յերկրի ափերի յերկայնքով, ապա կարող ենք տեսնել, թե ինչպես լեռները զնալով ավելի ու ավելի յեն բարձրանում: Բոլոր լեռները ծածկված են ձյունով ու սառույցով: Շատ հաճախ թանձր մառախուղը պարուրում է լեռնազագաթները, և դրանից լեռներն ավելի բարձր են թվում:

Թեև ձմռանը Նոր Յերկրում ավելի ցուրտ չե, քան Միբիլի շատ տեղերում, բայց և այնպես այնտեղ ծառեր չեն աճում. ամառն այնտեղ ընդամենը տասը շաբաթ է տևում և տաքությունը յերբեք հինգ-յոթ աստիճանից ավելի չի լինում:

Միայն մի քանի տեղում, ուր առանձնապես ուժեղ է տաքացնում արևը, մամուռ ու վտիտ խոտ է աճում, և տեղ-տեղ յերեւում են սողացող ուռենու և տարածուն կեչու խղճուկ թփիկները: Բայց Նոր Յերկրի ուռենիներն ու կեչիներն ամենեվին նման չեն մերիններին: Իրանք մինչև անգամ թփուտներ չեն, այլ մի քանի սանտիմետր բարձրություն ունեցող մանրիկ, սողացող թփիկներ: Բեվեռային ուռենին մի քիչ հիշեցնում է հապալասի վտիտ թփիկը: Այնուամենայնիվ այդ մանրիկ ուռենին դարնանը փշիկներ է արձակում և ծաղկում:

Ամենից տաք և քամուց փակված տեղերում Նոր Յերկրում աճում է ճախնամորին և իր հյուսված ձյուղիկներն է արձակում աղվեսախաղողը:

Բայց կարճատև ամառը չի կարողանում հալեցնել ամբողջ ձյունը Նոր Յերկրում, և արգեն իսկ ոգոստոսին այնտեղ սկսվում են սառնամանիքները, իսկ սեպտեմբերին ձմեռ է լինում:

Բուսականությամբ ե՛լ ավելի աղքատ ու տխուր են մյուս կղզիները Բեվեռային ծովում — Շպիցբերգեր: Շպիցբերգենն ամբողջապես ծածկված է սրածայր լեռներով, վորի համար ել ստացել է իր անունը: Շպիցբերգեն նշանակում է «սրածայր լեռներ»:


Շպիցբերգեն կամ Գրումանտ կղզիները գտնվում են Նոր Յերկրից դեպի արևմուտք, մոտ հազար կիլոմետր հեռավորության վրա: Շպիցբերգենը և նրա հարեման կղզիները ծովազնացները հաճախ կոչում են «սոսկալի» յերկիր: Չմեռն այստեղ ինն ամիս է տեփում, իսկ տարեկան յերեք ամիս արևը վոչ մի անգամ չի բարձրանում յերկնքի վրա: Մթության և ցրտի մեջ հաճախ մորեզնում են մրրիկները և ձյունախառն բուրբերը:

Այստեղ քիչ են հանդիպում նույնիսկ այն խղճուկ ու վտիտ բույսերը, վոր մենք գտնում ենք Նոր Յերկրում: Միայն մուգ շագանակագույն մամուռն է մի քանի տեղում պատում ապառաժ ժայռերը, վորոնք ամռանն ազատվում են ձյունից: Ամայի ու վայրենի յեն Շպիցբերգենի ափերը նույնիսկ ամառները:

ԻՆՉՈ՞Վ ԵՆ ՀԱՐՈՒՍՏ ԲԵՎԵՌԱՅԻՆ ՅԵՐԿՐՆԵՐԸ

Բեվեռային յերկրներն ամենից անբարեբեր յերկրներն են յերկրագնդի յերեսին: Բայց դրա փոխարեն Բեվեռային ծովում շատ կան վոչ միայն զանազան ձկներ, այլև թանկարժեք ծովազազաններ — կետեր, ծովացուլեր, ծովաչներ և ուրիշ կենդանիներ:

Բեվեռային ծովում ամենից ավելի հաճախ հանդիպում են ծովացուլեր: Ծովացուլերը մեծ կենդանի-



Ծովացուլեր սառցակտորի վրա

ներ են յերեք-չորս մեար յերկարությամբ, յերբեմն
ե՛լ ավելի: Նրանք յերկար և հաստ ժանիքներ ունեն:
Ծովացուլի ժանիքի վոսկրից զանազան բաներ են շի-
նում: Ծովացուլերը զնահատվում են նաև իրենց ճար-
պի և հաստ կաշվի համար:

Ծովացուլերից բացի, Բեվեռային ծովում կան
նաև ծովաշունք: Ծովաշունք մի քիչ նման է ծովացու-
լին, միայն հասակով ավելի փոքր է և ժանիքներ չու-
նի: Ծովաշունքը ծովում հանդիպում են ամբողջ հոտե-
րով:


Իրենց կարճ վոտքերի ոգնությամբ, վորոնք քա-
թեր են կոչվում, ծովաշունք հիանալի լողում է: Ծո-
վաշունք սառը ջրից չի վախենում, վորովհետև նա ել
ծովացուլի պես իր կաշվի տակ ունի ճարպի հաստ
շերտ, վորի միջով ցուրտն անց չի կենում:

Ծովացուլերը և ծովաշունքը վոչ ամբողջ ժամանակ
են ջրում անցկացնում: Հաճախ նրանք դուրս են սո-
ղում սառցակտորի վրա և ամառը սիրում են տաքա-
նալ արևի տակ: Ծովաշունքը սիրում են կողքի վրա
պառկել: Նրանք շատ ծուլ են և, սառուցյի վրա պառ-
կելով, յերբեմն միայն դեպի արևն են շուռ տալիս կամ
վոտը, կամ մեջքը, կամ կողքը:

Ծովաշունքն ել ծովացուլի պես բազմաթիվ ոգտա-
կար նյութեր է տալիս մարդուն: Ծովաշան ճարպից
պատրաստում են ոճառ, ոճիչ նյութեր, իսկ հյուսի-
սում ծովաշան ճարպը նավթի փոխարեն վառում են
լամպերում: Ծովաշունքի միսն ուտում են, իսկ կաշվից
կարում են հագուստ, վոտնաման և զանազան իրեր,
որինակ՝ աշակերտական պայուսակներ:

Բեվեռային ծովում կան նաև կետեր: Կետը ծովա-
յին վիթխարի կենդանի յե: Իր տեսքով նա մեծ ձուկ
է հիշեցնում: Կետերը յերբեմն 25 մեար յերկարու-
թյուն են ունենում: Կետերի բերանն այնքան մեծ է,
վոր մի մեծ նավակ հեշտությամբ կմտնի այնտեղ,
բայց կետն ատամներ չունի: Ատամի փոխարեն վերևի

ժնոտի վրա աճում են մի ամբողջ շարք յերկար, ձկուն
յեղջերաթերթիկներ: Այդ յեղջերաթերթիկները ներ-
քեվի ծայրում բաժանվում են առանձին թելերի և
կազմում բերնից կախված մի տեսակ ծոպ, մի քիչ հի-
շեցնելով բեխերը, վորի համար ել դրանք կոչվում են
կետի բեխեր:



Կետը Բեվեռային ծովում

Կետերը սնվում են զանազան ծովային մանր կեն-
դանիներով, ձկնականջներով և փոքրիկ ձկներով:
Յերը կետն ուտել է ուզում, թեթևակի բաց է անում
իր ահագին յերախը և առաջ լողում: Ջրի հետ միասին
նրա յերախն են զնում ձկնիկներ և հարյուրավոր զա-
նազան մանր կենդանիներ: Կետի բերանը մտնող ջուրը
դուրս է հոսում բերանի անկյուններից, իսկ ձուկը
յեղջերաթերթիկները պահում են կետի բերանում:

Կետի աչքերը մանր են: Վոտքեր բոլորովին չկան,
իսկ նրանց փոխարեն առջևից կա յերկու լողաթա-
ղանթ: Հետեվից կետը պոչ ունի, վոր նման է ձկան

պեչին: Գլխի գազաթին կետը ռունգ ունի, վորով շըն-
չում է: Դրա համար կետը գլխի վերևի մասը ջրից
դուրս է պահում: Ծանր շունչ քաշելով, նա դեպի ողն
է նետում պղպղակների և գոլորշու շատրվան:

Կետերն ապրում են սովորաբար մենակ կամ ըն-
տանիքներով — հայրը, մայրը և մեկ կամ յերկու
ձագ: Բայց յերբեմն կետերը միանում են մեծ հոտե-
րով: Չմեռները նրանք Բեվեռային ծովից հեռանում
են ավելի տաք ծովերը, բայց ամառները դարձյալ
հյուսիս են վերադառնում:

Ինչպես ծովաչների և ծովացուլերի, այնպես ել
կետերի կաշվի տակ ճարպի հաստ շերտ կա, վորը
նրանց պաշտպանում է ցրտից:

Կետի ճարպն ու բեխը շատ են գնահատվում, ուս-
տի շատ արհեստագործ մարդիկ Բեվեռային ծովն են
գնում կետեր վորսալու համար:

Ծովացուլերը, ծովաչները և կետերը թեպետ և
ապրում են Բեվեռային ծովերում, բայց դեռևս Բեվե-
ռային մարզի իսկական տերերը չեն հանդիսանում:
Ծովային գազաններին, ծովաչներին և ծովացուլերին
վորսում է մի զիշատիչ, բևեռային մարզի իսկական
տերը՝ սպիտակ արջը կամ, ինչպես նրան կոչում են
հյուսիսում, ուշկույտ: Սպիտակ արջը նման է ուսսա-
կան արջին, միայն թե ավելի յերկար է նրանից և
նրա բուրդը սպիտակ է, արծաթավուն: Պատված ար-
ջերի բուրդը մի քիչ գեղնում է:

Չմեռը սպիտակ արջը չի քաշվում վորջը, ինչպես
մեր անտառային մուգ-չաղանակադույն արջը: Մենակ
կամ յերկուսով նա թափառում է սառցադաշտերում և
հետամուտ լինում անդդույշ ծովաչներին: Սպիտակ
արջերը սնվում են նաև ձկով, վորին ճարպկորեն
վորսում են ջրում: Ամառը նրանք թռչունի ձու և
թռչունի ձագ են ճաշակում: Սպիտակ արջը ցրտից չի
վախենում: Եգ արջը նույնիսկ ձմեռն է ճուտեր ծնում:
Դեկտեմբեր ամսին եգ արջը յերկու-յերեք ճուտ է բե-



Սպիտակ արջ

րում: Մայրը նրանց պահում է սառցե վորջում, բայց նրանք շուտ են մեծանում և գարնանն արդեն իսկ շան հասակի յեն լինում:

Գարնանը մայր-արջը փչրում է սառցե վորջը և իր ձագերին ազատ աշխարհ է հանում: Նրանց սովորեցնում է լողալ և ձուկ վորսալ: Ձագերն ամբողջ ամառը մոր հետ են լինում և միայն աշնանն են թողնում նրան ու սկսում ապրել ինքնուրույն կյանքով:

Սպիտակ արջը, չնայած իր մեծության հիանալի լողվոր է: Նա սուզվում է սառը ջրի մեջ սառույցների արանքում, մաղցում սառցալեռները և նայում, թե վո՛րտեղ են գտնվում ծովազաղանները — ծովացուլերն ու ծովաչները: Սառույցի վրա նկատելով ծովացուլին, սպիտակ արջը գնում է քամու կողմից և կամաց մոտենում ծովացուլին: Հասնելով նրան, արջը ձգտում է ճիրանները խրել նրա ծոծրակը: Ծովացուլը թափահարվում է, ցավից մոռնում և դեպի ջուրը մաղցում: Արջը մեկ անգամ էլ է ճիրանները խրում ծովացուլի ծոծրակը, և արջի ու ծովացուլի միջև մահացու կռիվ է սկսվում: Յերբեմն ծովացուլին հաջողվում է հասնել սառույցի յեզրին և ջուրը նետվել: Արջը նետվում է նրա հետևից և արդեն ջրում վերջ է տալիս նրան:

Սպիտակ արջը յերբեմն ծովաչների դեմ իսկաական վորսորդություն է կազմակերպում: Նկատելով, վոր լողում են ծովաչները, արջը նստում է սառույցի յեզրին և հսկում: Հենց վոր տեսնում է ջրից դուրս պարզված ծովաչան գլուխը, արջը ճարպկությամբ բռնում է նրան: Մի քանի բուլեյից ծովաչունը խեղդամահ է արված, և արջը նրա դիակը դուրս է քաշում սառույցի վրա ու լափում:

Ամառը բեվեռային յերկիրները, Սառուցյալ ծովի կղզիներն են թռչում բազմաթիվ գանազան ծովային թռչուններ: Թռչուններն այնքան շատ են լինում այստեղ, վոր հաճախ ամբողջապես ծածկում են վիթ-

խարի ապառաժներ ու ժայռեր: Այնպիսի տեղեր, ուր շատ թռչուններ են բուն դնում, կոչվում են «թռչնաքաղաք» կամ «թռչնաշուկա»: Այդ տեղերում իրոք վոր մշտական աղմուկ է տիրում, ինչպես շուկայում:

Բեվեռային յերկրներն ամենից շատ են գալիս ճայերը, ջրագուստները, սուզահավերը, սագերը, ծովային բազերը և այդերուկները: Այդերուկը տալիս է շատ փափուկ և արժեքավոր բմբուլ:


Այսպիսով, կարճատև ամառվա ընթացքում բեվեռային յերկրներում կյանքը յեռում է: Բայց հենց վոր գալիս է ոգոստոսը և սկսվում են ցրտերը, կյանքը նորից մեռնում է: Թռչունները գրեթե բոլորը թռչում են դեպի հարավ: Ծովաչներն ու ծովացուլերը լողում են այստեղ, ուր ավելի տաք է: Չմեռելու յեն մնում սպիտակ արջերը, սպիտակ և բեվեռային աղվեսները, վորոնք չափչփում են սառցազալտերը, իրենց համար սնունդ փնտռելով:

Ծովային գագանը, ձուկը և թռչունը վաղուց են մարդկանց դեպի հեռավոր հյուսիս գրավել: Ամեն ամառ հյուսիսային ծովերում և բեվեռային մարզի կղզիներում յերեվում են հազարավոր արհեստագործ մարդիկ: Յերկայմանավերով, կարբուսներով և ձրկնորսանավակներով կամ մեծ մակույկներով այդ խիզախ արհեստագործներն իրենց մայրենի տեղերից հազարավոր կիլոմետր հեռու յեն գնում և այստեղ ծովազաղաններ սպանում, կեռ ու արջ վորսում, այդերուկի բմբուլ հավաքում:

Իրա համար եր, վոր իր ընկերների հետ դեպի Բեվեռային ծովը ճանապարհ ընկավ Ալեքսեյ Նիմկովը: Լողում էլին նրանք դեպի Նոր Յերկիրն, ուր առաջ յեղել էլին ամեն ամռանը:

11-28899





«Թռչնաշուկա» Բևեռային ծովի կղզում

Ութ որ իրար վրա լավ յեղանակ եր: Մակույկը ակսել եր մոտենալ արդեն Նոր Յերկըին: Ծովի վրա յերեվում էյին ձյունապատ և սառցապատ բարձր լեռներ:

— Ե՛հ, տղե՛րք, — ասաց Խիմկովն իր ընկերներին, — վաղը տեղը կհասնենք: Մի քիչ կհանգստանանք և աշխատանք կսկսենք:

Բայց յերեկոյան դեմ հանկարծ ծովի վրա ուժեղ փոթորիկ բարձրացավ: Ծովի յերեսով մեծ ալիքներ չարժվեցին: Փոքրիկ մակույկը տաշեղի պես դես ու դեն եր նետում: Սառցաբույր ջուրը վողոզում եր նավակի տախտակամածը: Քամին մակույկն արագ քշում եր ու հեռացնում Նոր Յերկըից:

— Բաներս բուրդ ե, տղե՛րք, — ասաց լոցմանը: — Փոթորիկը հանաք չի անում, յերեվի Նոր Յերկըի յերեսն ել չենք տեսնի:

Բոլորը վհատվեցին: Ամբողջ յերեք որ մոնչաց ծովը: Միայն չորրորդ որը փոթորիկը հանդարավեց: Յերկնակամարում յերեվաց արեգակը: Բայց արեվն ել չմխիթարեց արհեստագործներին: Նրանք տեսան, վոր ամբողջ ծովը ծածկված է լողացող սառցակույտերով: Սառցակույտերը շրջապատեցին նավակը, և սառույցի հետ միասին նավակը քչեց դեպի արևմուտք: Յերկու որ սառույցները նավակը քշում էյին ծովի յերեսով: Վերջապես, նավագնացներն իրենց առջևում տեսան ինչ-վոր ցամաք և սրածայր լեռներ:

— Բայց սա Գրումանտ կղզին ե, — ասաց Խիմկովը: — Ա՛յ թե ուր քչեց մեզ:

Բոլոր արհեստագործներն այնքան ջարդվել էյին փոթորիկից, վոր հազիվ-հազ էյին վոտքի վրա կանգնում:

Խիմկովը վճռեց մոտենալ կղզուն և հանգիստ տալ իր ընկերներին: Նա հիշեց, վոր մի քանի տարի առաջ

Գրումանտում ձմեռել էին մեզենցի կետորսները և այնտեղ խրճիթ կառուցել: Յերբ Խիմկովն իր ընկերներին հաղորդեց կղզուն մոտենալու վորոշման մասին, բոլորը սաստիկ ուրախացան: Բայց Խիմկովը ճիշտ չգիտեր, թե վո՛րտեղ է գտնվում մեզենցի կետորսներին խրճիթը, իսկ մինչ այդ սառույցները թույլ չէին տալիս, վոր նավակը մոտենա ափին: Մինչև ափը դեռ կես կիլոմետրից ավելի կար:



Շախբերդեն

— Դե՛հ, տղե՛րք,— ասաց Խիմկովը,— դուք մնացե՛ք մահույկում, իսկ յես մի յերեք հոգու կվերցնեմ և ափը կգնամ, խրճիթը կփնտռեմ: Հենց վոր գտնենք, կվերադառնանք և այն ժամանակ մի կերպ դուրս կպրծնենք դեպի ափը:

Խիմկովն իր հետ վերցրեց իր վորդի Իվանին և յերկու նավաստիների՝ Ստեպան Շարապովին և Ֆյոդոր Վերիգինին: Նրանք վերցրին համենայն դեպս մի հրացան, տասներկու լիցքի վառոդ, մի կացին, մի փոքրիկ կաթսա, ալյուրի պաշար, մի դանակ, մի քիչ

ծխախոտ, հրահան՝ կրակ ստանալու համար, և դնացին կղզին:

Նրանք յերկար ժամանակ ճանապարհ բաց արին սառույցների միջով, շրջանցելով չսառած տեղերը: Վերջապես, հասան ափը: Վո՛չ մի ծառ, վո՛չ մի թուփ, միայն քար և ձյուն, իսկ հալած տեղերում՝ դանդրավուն մամուռ:

Ափով գնալով մի չորս կիլոմետր, Խիմկովը և նրա ուղեկիցները տեսան կիսափուլ մի խրճիթ: Խրճիթի մոտ վառելափայտ եր դարսված: Տարրինակ եր այդ մեռած կղզում մարդկային բնակարան տեսնել:

Խիմկովը մտավ խրճիթը: Մի անկյունում կավից շինված խրճիթն եր, մյուսում՝ վորմնատախտը:

Ստեպան Շարապովը և Ֆյոդոր Վերիգինը փայտ բերին ու կրակ վառեցին: Կաթսայով ջուր յեռացրին, յերկու բուռը ալյուր լցրին: Կերան ապուրը: Մի քիչ հանգստացան: Հետ ճանապարհվեցին:

— Ա՛յ թե կուրախացնենք մերոնց,— ասաց Խիմկովը:— Խրճիթում կտեղավորենք հիվանդներին, իսկ առողջները կմնան մահույկում: Կարելի յե փնտռել, թե այստեղ մոտերքում ծովացուլի կամ ծովաչան խմբեր չկա՞ն արդյոք, այն ժամանակ վորսով կզբաղվենք:

Արհեստագործները ճանապարհին յեղջերու տեսան: Յեղջերուներն ավելի շատ լինում են սուռնդրայում, Մուրմանում և Հյուսիսային յերկրում, բայց յերբեմն հանդիպում են նաև կղզիներում:

— Զխիե՞նք յեղջերույին,— հարցրեց Շարապովը Խիմկովին:

— Այո՛, լավ կլինի: Իջի՛ր ձորակը, յեղջերույի դեմը կարիր:

Շարապովը վազեց ձորակը: Յերկար ժամանակ վոչինչ չեր լավում: Բայց հանկարծ լուռթյան մեջ հնչեց կրակոցը, իսկ հետո լավեց Շարապովի հեռավոր կանչը:

Խիմկովը, նրա վորդին և Վերիգինը գնացին ձորակը և հեռվից տեսան Շարապովին:

Նա գլխարկն եր թափահարում, իսկ ձյան վրա, վոչ հեռու, յերեմում եր յեղջերույի մարմինը:

Կես ժամից յեղջերույին մաքրեցին: Միսը չորս մասի բաժանեցին և բեռը շալակած քայլեցին դեպի ափը:

Շուտով հասան այն նշանին, վոր թողել էյին ափին, յերբ գնացել էյին խրճիթը վնտռելու:

— Տղե՛րք, մեր մակույկը վոնց վոր չի յերեմում, — ասաց անհանգիստ ձայնով Խիմկովը:

— Իսկ ո՞ւր ե կորել, — հարցրին նրա ուղեկիցները:

Ափին սառույց ել չկար: Արևմտյան քամի յերբարձրացել, քչել սառույցները և նրանց հետ միասին յերեմվի, մակույկը կարող ե նաև մակույկը ջախջախված լինեի սառույցներից և սուզված:

ՄԵՆԱԿ՝ ՍԱՌՅԵ ԱՆԱՊԱՏՈՒՄ

Մովի վրա մակույկի վոչ մի նշան չկար: Հուսահատությունը համակեց նրանց: Յերկար ժամանակ կանգնեցին ափին և անհույս նայում էյին դեպի մառախլապատ հեռուները:

— Ի՞նչ անենք, — ասաց Ստեպան Շարապովը:

— Ստիպված ենք ապրել կղզում, մինչև վոր մեր բախտից մի վորևե արհեստագործական նավ գա այս կողմեր, — պատասխանեց Խիմկովը: — Բայց սակավ են գալիս այս կողմերը, — ավելացրեց նա:

— Դե՛, տղե՛րք, կարիք չկա վշտանալ, — ասաց Ֆյոդոր Վերիգինը: — Կապրենք այստեղ, հո չենք մեռնի:

— Ա՛յ թե գործ բացվեց, — ասաց ավագ Խիմկովը և սրտանց թքեց գետնին:

— Ա՛յո՛, ինչպես յերևում ե, պետք ե տեղավոր-

վել նոր բնակարանում, — փորձեց կատակել յերիտասարդ Խիմկովը:

Բայց վոչ վոք չժպտաց: Բոլորի սիրտն ել սևացել եր: Աշուն եր գալիս, և հազիվ թե կարելի լինեի հուսալ, վոր այդ ժամանակ վորևե արհեստագործական նավ կգա հեռավոր Գրումանտը:

Չորս արհեստագործները տխուր վերադարձան խրճիթը: Նրանք վատ անցկացրին առաջին գիշերը մայի կղզում: Վոչ վոք գրեթե չքնեց: Ամեն մեկը ծանր մտածմունքի մեջ եր թաղված:

Վաղ առավոտյան Խիմկովն ընկերներին վեր կացրեց և ասաց.

— Պետք ե ձմեռելու պատրաստվել: Ժամանակ կորցնել չի կարելի: Նախ և առաջ պետք ե ինչքան կարելի յե շատ վառելիք հավաքել: Ափին լողաթևեր¹⁾ կան: Պետք ե ինչքան կարելի յե շատ հավաքել, թե չե առանց վառելիքի ձմռանը կսառչենք: Իսկ հետո արդեն պետք ե հոգալ ուտելիքի մասին:

Չորսով ափ գնացին և սկսեցին փայտեղեն քաշ տալ դեպի խրճիթը: Նրանք ամեն որ աշխատանքի էյին դուրս գալիս, իսկ Ստեպան Շարապովը յերբեմն գնում եր յեղջերու վորսալու: Նրան հաջողվեց¹⁾ տասը յեղջերու խփել: Յեղջերույի միսը ձյան մեջ թաղեցին, իսկ մորթիներից տաք կոշիկներ և վերմակներ պատրաստեցին:

Շուտով բոլոր փամփուշտները կրակվեցին: Ինչո՞վ վորս անել: Չլցված հրացանից ի՞նչ ոգուտ: Բոլորը վհատվեցին:

— Ի՞նչ անենք, — հարցրեց Շարապովը:

— Մի կերպ կապրենք, կարիքը հնարագետ կըղարձնի, — ասաց Խիմկովը:

¹⁾ Լողաթև ե կոչվում անտառանյութը — տախտակներ, փոթորկից ջարդված նավերի բեկորներ, ափ նետված գերաններ և փայտեր:

Մի անգամ ափին գտան մի տախտակ՝ վրան յերկաթե կեռ և մի քանի մեծ մեխ: Կեռը գործածեցին մուրճի տեղ: Նրանով տախտակացրին մեխերը, նրանցից նիզակի ծայրեր պատրաստեցին և սկսեցին նրանցով սպիտակ ազվես վորսալ:

Յեկավ ոգոստոս ամիսը: Սկսվեցին սառնամանիքները: Ձյուն յեկավ: Ձմեռը հաստատվեց: Որեքն անցնում էին իրար հետևից: Բայց շուտով կարճ ցերեկներն ել անցկացան: Սկսվեց համատարած գիշերը:

— Այստեղ տոներն ել կմոռանաս, որվա հաշիվն ել կկորցնես, — ասաց մի անգամ Վերիգինը:

— Այստեղ ի՛նչ տոն, ի՛նչ բան, — պատասխանեց Խիմկովը:

Սակայն Վերիգինը մտածեց որացույց պատրաստել: Նա դանակով գավազանի վրա գծեր փորեց, ամեն մի յոթներորդ գիծը մյուսներից ավելի խորն անելով: Այդ լայն գծերը նշանակում էին «կիրակի որերը»:

— Դատարկ բան ես մտածել, Ֆյոդո՛ր, — ասաց Խիմկովը, նայելով, թե ի՛նչպես է Վերիգինը «որացույց» պատրաստում: — Ձե՞ վոր մենք հիմա ել որերի հաշիվը կորցրել ենք: Հետո, ի՞նչպես կհիշես զո որացույցում որերը, յերբ մինչև մարտ ամիսը շարունակ գիշեր ե լինելու:

— Ա՛յ, յերբ պառկենք քնելու, գծիկի վրա խաչ կդնեմ, — այդ կնշանակի թե մի որ անցավ:

— Դե՛, լավ, արա՛:

Մի անգամ վորան ինքը յեկավ վորսորդների մոտ: Ինչ վոր մի գիշեր դրսի դռան մոտ խշրոց լավեց: Շուտով սկսեցին դուռը ճանկոել: Ինչ—վոր մեկը կամենում եր ներս մտնել:

— Արջ ե, տղե՛րք, — ասաց Խիմկովը: — Վերցրե՛ք նիզակները:

Բոլորը վեր թռան անկողիններից, վերցրին փայտի նիզակները, իսկ Խիմկովը վերցրեց կացինը:

— Դե՛հ, տղե՛րք, անդգույշ չլինեք: Հենց վոր ար-

ջը գլուխը դռնից ներս կխոթի, խփեցե՛ք նիզակով: Աշխատեցեք ինչքան կարելի յե խորը խրել նրա կոկորդը:

— Կաշխատենք:

Խիմկովը կրակ վառեց ոջախում, վորպեսզի խրճիթում լույս լինի, և բոլորը կանգնեցին դռան մոտ: Արջն արդեն հաշտումն եր: Նա շոշափեց դուռը և սկսեց թաթերով բաց անել: Մի բոպեյից արջի գլուխը կիսով չափ դռնից ներս յեկավ, և այդ իսկ պահին յերեք նիզակ մեկ անգամից խրվեցին արջի մարմնի մեջ: Նույն բոպեյին ինքը Խիմկովը սկսեց կացինի հարվածներ տեղալ:

Արջը, այդպիսի դիմադրություն չսպասելով, առաջին պահին ապչեց, բայց հետո նետվեց խրճիթը, յերեք նիզակներն ել ջարդվեցին և արջը թափալվեց Ստեպան Շարապովի վրա: Բայց Խիմկովը քնած չեր: Նա հետևից նստեց արջի մեջքին և ամբողջ թափով նրա գանգը ձեղքեց կացինով: Արջը փուվեց հատակին, և վորսորդները վերջ տվին նրան:

— Ա՛յ թե լավ հյուր բարեհաճեց գալ, — ասաց Խիմկովը, ճակատի ջրախնքը սրբելով:

— Լավ վոր ժամանակին գլուխը ձեղքեցիր, — ասաց Ստեպանը, — թե չե արջը լավ եր ինձ ճմուռ:

— Ե՛հ, հիմա ել արջի միս ունենք, — կատակեց Ֆյոդոր Վերիգինը:

Արջին քերթեցին: Մորթին մաքրեցին: Միսը կտորեցին: Միսը կտորելիս վորսորդները նկատեցին, վոր արջի յերակները շատ ամուր են և հեշտությամբ են թել—թել բաժանվում:

— Իսկ չե՞ վոր, արջի յերակից կարելի յե նետաղեղի լար չինել, — ասաց յերխտասարդ Խիմկով—վորդին:

— Այդ ել բան ե, — պատասխանեց հայրը:

Արջի հետ պատահած այս դեպքը չորսի համար ել տոնի պես եր: Բոլորն ուրախացան:

Սկսվեց բեմեռային ձմեռը: Գիշեր-ցերեկ մութ եր: Վորս անել անկարելի յեր: Այնպիսի սառնամանիքներ էին, վոր շունչը բռնվում եր: Դժբախտ ծովագնացները գրեթե ամբողջ ժամանակ նստում էին խրճիթում: Խրճիթն ամեն կողմից ձյունով էին պատել, վոր քամին տաքությունը չտաներ: Խրճիթում, յերը ոջախը չեր վառվում, կատարյալ խավար եր: Այդպես մթության մեջ չորսն ել պառկում էին յեղջերույի մորթիով ծածկված անկողինների վրա:

Բոլորն ել կարոտել էին հարազատներին: Մտածում էին, թե յերբեիցե կընկնե՞ն արդյոք հայրենիք: Մխիթարական մտքեր քիչ էին դալիս: Խորը ակրությունը համակում եր բոլորին:


Վոչ վոք չգիտեր, թե քանի՛ ամիս են ապրում կղզում: Ժամացույց չունեին: Այն ժամանակ ժամացույցն ընդհանրապես հազվագյուտ բան եր: Արևը չեր յերևում յերկնքի վրա, շուրջ բոլորը շարունակ գիշեր եր: Մի բան եր մնում, — պառկել և քնել: Յերբ պառկելը ձանձրացնում եր, մեկն ու մեկը վեր եր կենում, կրակ եր վառում ոջախում, ձաչ եր յեփում: Ճաչից հետո դարձյալ պառկում էին: Այդպես ել գնում եր ժամանակը:

Մի անգամ Ստեպան Շարապովը խրճիթից դուրս յեկավ, վոր մի քիչ քայլի: Մի րոպե հետո նա ներս վազեց:

— Տղե՛րք, շուտով արե՛վը դուրս կգա, արե՛վելքում՝ յերկինքը սկսել է սպիտակել:

Բոլորը խրճիթից դուրս վազեցին և սկսեցին նայել դեպի արե՛վելյան կողմը: Այնքեղ իսկապես վոր մութ յերկինքը մի քիչ ավելի լուսավոր եր, քան մյուս տեղերում: Ամեն ոք սկսեցին հեռեվել, թե ի՛նչպես եր յերկինքն արե՛վելքում լուսավոր դառնում: Վերջապես ծովի վրա յերեկաց արևի մի ծայրը: Բայց մի քանի րոպեյից դարձյալ մայր մտավ, և սառցե անապատում դարձյալ խավարը պատեց:

Հաջորդ որը ծովի վրա յերեկաց արդեն արևի կե-
տը, իսկ մի քանի որից արե՛վն արդեն բավական բարձ-
րանում եր յերկնքի վրա, և համեմատաբար յերկար
ժամանակ մնում այնտեղ:



Սպիտակ արջի վորս

— Ե՛հ, — տղերք, ձմեռն անցկացրինք, — ասաց
Խիմկովը:

Բոլորի աչքերում արցունքներ յերևացին: Նրանք
գրկեցին իրար:

Բայց չորսից վոչ մեկը չգիտեր, թե վո՛ր ամիսն է
և ի՛նչքան ժամանակ են անցկացրել կղզում:

Որեց-որ արևն ավելի ու ավելի յեր բարձրանում

յերկնքում, և արեկող տեղերում ձյունը սկսում էր հալել: Շուտով հարված տեղերում յերևաց մամուռը: Դեպի կղզին թռան սաղերն ու սուղահավերը: Սկսեցին վազ տալ սպիտակ աղվեսները: Խիմկովն ու ընկերները սկսեցին վորսի գնալ:

Նիզակներից բացի, Ստեպան Շարապովը նետադեղել էր շինել: Ափին նա գտել էր յեղեմնու արմատ, դանակով պատրաստել էր, իսկ լարը շինել էր արջի յերակից: Սրածայր նետեր էյին շինել ծայրը սրված մեխերից:

Այդ նախնադարյան դենքով նրանց հաջողվեց սպանել մի քանի յեղջերու և յերեք սպիտակ աղվես: Յեղջերույի թարմ միսն ամրացրեց նրանց ուժերը, և նրանք սկսեցին նորջից փայտեղեն հավաքել ափունքից: Յերկար ձմեռվա ընթացքում նրանք ահագին փայտ էյին վառել:

Փայտեղեն հավաքելիս, նրանք հուսալի աչքերով նայում էյին սառույցից մաքրված ծովին: Ամեն ոք նայում էյին նրանք, թե ծովի վրա չի՞ յերեվում արդյոք արհեստագործական մի նավ, վորին կարելի լիներ նշաններով իմաց տալ իրենց գոյության մասին:

Բայց որերն անցնում էյին իրար հետևից, իսկ ծովի վրա վոչ մի նավ չեր յերեվում: Այդպիսի ապարդեյուն սպասման մեջ անցավ ամբողջ ամառը: Դարձյալ արեւը մայր մտավ, դարձյալ սառնամանիքներ և ձյան բուքեր սկսվեցին: Վրա հասավ յերկրորդ ձմեռը:

Կարոտով և տխրությամբ լեցուն չորս դժբախտները նորից փակվեցին իրենց զառամ խրճիթում, և նորից ձգվեց յերկար, խավար բեվեռային գիշերը:

ՅԵՐԿՐՈՐԴ ԶՄԵՌՈՒՄԸ

Յերկրորդ ձմեռումը սառցե կզզում նույնքան տխուր էր ու անձկալի, վորքան առաջինը: Նրանց միակ զվարճությունը հյուսիսափայլը դիտելն էր:

Հյուսիսափայլը կարելի յե տեսնել միայն հյուսի-

սում: Յերկար ու մութ գիշերները յերկնքի վրա հանկարծ յերեվում է առանձնահատուկ մի լույս: Նախ լույսը փայլում է յերկնքի մի ծայրում, իսկ հետո ավելի ու ավելի յե բարձրանում: Հետո յերկնքի վրա յերեվում է մեծ, գույնզգույն ծիածան, վորն ասես քամու շնչից փողփողում ու յերերվում է: Հետո ծիածանը բաժան-բաժան է լինում, և յերկնքի վրա սկսում են շարժվել մեծ սյուներ կամ գոտիներ: Այդ ժամանակ թվում է, թե ամբողջ յերկինքը վառվում է և յերկնային հրդեհը մի տեղից մյուսն է նետվում: Բայց մի քան րոպե անց լույսը մարում է յերկնքում, և նորից սկսվում է մութ գիշերը, ե՛լ ավելի յե տխրում մարդու սիրտը:

Սակայն Խիմկովն իր ընկերներին համոզեց ինչքան կարելի յե քիչ պառկել: Նրանք լամպ էյին շինել, վորի մեջ յեղջերույի յուղ էյին վառում: Լամպը մի փոքրիկ կավե թաս էր, վորը Ֆյոդոր Վերիգինն էր շինել:

Պատրույզը լաթից էյին պատրաստել: Յերբ ոջախի կրակը դադարում էր լուսավորել խրճիթը, վառում էյին այդ լամպը, և աղոտ բոցը լուսավորում էր աղքատիկ քողտիկը: Այդ լամպի շուրջը նստած, բոլորն էլ աչխատում էյին վորեւե բանով զբաղվել — արջի յերակից թել, վոսկորից կամ մեխից ասեղ էյին պատրաստում:

Բոլորի հագուստն ու կոշիկները անցած տարում մաշվել ու քրքրվել էյին: Հարկավոր էր յեղջերույի մորթուց հագուստ կարել:

Առաջին ձմռանը չորսից վոչ մեկը չհիվանդացավ, բայց յերկրորդ ձմռանը նախ հիվանդացավ Իվան Խիմկով կրտսերը, իսկ հետո Ֆյոդոր Վերիգինը: Յերիտասարդ Խիմկովը չուտով սկսեց լավանալ, իսկ Վերիգինը սկսեց նիհարել:

Նա ընդախտով էր բռնվել: Ընդախտով հաճախ հիվանդանում են բեվեռային յերկրների բնակիչները:

Լնդախտը նրանից ե սկսվում, վոր մարդը թուլանում է: Ամբողջ ժամանակ ուզում ե պառկել: Հետո ցավեր են սկսվում հոդերում: Մարմնի ամբողջ արյունը փչանում է: Մարդու բերնից վատ հոտ ե դալիս: Լնդերն ուռչում, կապտում են, և նրանցից սկսում ե սև արյուն հոսել: Դեմքը ուռչում ե, վոտքերը նույնպես, վոտքերի վրա վերքեր են առաջանում: Մարդը շուտով մեռնում է: Լնդախտը ստացվում ե վատ և վոչ թարմ ուտելիքից:

Շուտով Ֆյոդոր Վերիգինն այնքան թուլացավ, վոր չէր կարող քայլել և շարունակ պառկած եր ու ցավից հառաչում եր: Մի քանի շաբաթից նա մեռավ: Ֆյոդորի մահը շատ ուժեղ ազդեցություն դործեց բոլորի վրա: Ամեն մեկը մտածում եր իբ մասին, թե մի գուցե իրենն ել նույն ճակատագիրն ե սպասում:

Տիրեցին, վչտացան Ֆյոդորի համար: Տան մոտ ձյան մեջ փոս փորեցին և նրան թաղեցին այդ փոսի մեջ: Ընկերով թաղումից հետո յերեք ծովագնացները ախուր-տրտում վերադարձան, և ե՛լ ավելի ծանր դարձավ նրանց սրտում:

Յերկրորդ ձմեռը, սակայն, մնացածների համար բարեհաջող անցավ: Մի քիչ հիվանդացավ ծերունի Խիմկովը, բայց գլուխն ազատեց, լավացավ: Շուտով դարձյալ յեկավ դարունը: Դարձյալ թռան յեկան թռուչունները, ծովի վրա յերեվացին ծովային գազանները: Դարձյալ սկսվեցին նայել դեպի ծով, վորսորդություն անել և փայտեղեն հավաքել: Յեվ կյանքն սկսեց ընթանալ իր կարգով: Դարձյալ սկսեցին սպասել, թե նավ չի՞ յերեվում արդյոք ծովի վրա:

Բայց յերկրորդ ամառն ել նավ չերեվաց: Սկսեցին պատրաստվել յերրորդ ձմեռամանը: Աչխատանքի և վորսորդության մեջ աննկատ անցավ կարճ ամառը: Դարձյալ արևը թագնվեց կես տարով: Դարձյալ սկսվեցին փոթորիկն ու ցուքտը: Յերեքից յուրաքանչյուրը, նայելով, թե ինչպես արևը մայր ե

մտնում ձմեռվա համար, ինքնիրեն մտածում եր. «Կվի՞ճակվի՞ ինձ արդյոք նորից տեսնել կարմիր արևը»:

ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՌՑԻ ԳԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Անցավ ելի մի ձմեռ, նրանից հետո յերրորդ ամառը, իսկ հետո չորրորդը, հինգերորդը և վեցերորդը: Ձմեռները կղզում ամբողջ շաբաթներով մոռնում եր փոթորիկը, արհեստագործները անից դուրս չեյին գալիս: Ձմռանը ձյունն այնպես եր թաղում խճիթը, վոր գարնանն արհեստագործները հազիվ հազ կարողանում եյին քանդել այն:

Յերեք ծովագնացները մենավոր կյանքով ապրում եյին սառույցի ու ձյան մեջ: Ամեն ամառ նրանք հուսալի սրտով դուրս եյին սողում իրենց խճիթից և նայում դեպի ծով, — չի՞ յերեվում արդյոք վորևե մի նավ: Համենայն դեպս բարձր ըլուրի վրա խարույկի համար փայտ եյին դարսել: Խիմկովը վորդուն և Շարպովին ասել եր, վոր հենց ադադաստ յերեվա ծովի վրա, իսկույն վառեն խարույկը, դրանից նավաստիները կիմանան, վոր կղզում կենդանի մարդիկ կան:

Բայց ամառն անցնում եր ամառվա հետևից, իսկ վոչ մի նավ չէր գալիս դեպի կղզին: Դժբախտ ծովագնացները, զգալով, թե ինչպես են իրենց ուժերը թուլանում. տարեց-տարի արդեն կորցնում եյին յերբևիցե իրենց հարազատ վայրերը տեսնելու հույսը: Ամեն մեկն ինքն իր մեջ մտածում եր, վոր իրեն վիճակված ե մեռնել այդ սառցե կղզում, վոր այդ կղզին կլինի իր գերեզմանը: Յերեքի առողջությունն ել թուլացել եր: Ավելի քան հինգ տարի նրանք հացի պատառ չեյին տեսել և սնվել եյին միայն յեղջերույի ու արջի մսով: Բոլորն ել գազանների պես մազակալել եյին և միանգամայն վայրենացել:

Վրա հասավ յոթներորդ ամառը: Դարձյալ սկսե-

ցին փայտեղեն հավաքել: Թեև վոչ վոք արդեն չեր հավատում սառցի գերությունից ազատվելուն, բայց և այնպես յուրաքանչյուրն աշխատում եր ինչքան կարելի յե յերկար մնալ ծովափին: Յուրաքանչյուրն այնուամենայնիվ հույս ունեք, վոր ահա ծովի վրա նավ կերեվա և կվերցնի իրենց: Բոլորը հույս ունեյին տուն վերադառնալ:

Բայց որերը դարձյալ անցնում էյին որերի հետև վից, իսկ ծովն ամայի յեր: Ամառն էլի մոտենում եր իր վախճանին, և նավազնացները սկսել էյին նոր ձմեռման պատրաստվել: Մի անգամ հանկարծ հեռվից մի նավ յերեվաց ծովի վրա: Առաջինը տեսավ Ստեփան Շարապովը: Ուրախությունից գլուխը կորցրած, Ստեփանը վազեց խրճիթը հայր և վորդի Խիմկովներին իմաց տալու համար:

— Նա՛վ, նա՛վ, — բղավեց նա ներս վազելով խրճիթը:

— Շո՛ւտ խարույկ վառիր ծովափին, — բղավեց Խիմկովն իր վորդուն:

Մի ըստեյից ծովափին վառվում եր խարույկը, և նրա ծխի բարձր սյունը դեպի յերկինք եր բարձրանում:

Յերեքով փայտ էյին նետում խարույկը և ազահաբար նայում դեպի ծով, ուր հեռվում լողում եր նավը:

« Կնկատե՞ն մեր խարույկը, թե՞ չեն նկատի: Կգա՞ն մեր հետևից, թե՞ կթողնեն բախտի քմահաճույքին», — մտածում էյին ծովազնացները:

Հանկարծ Ստեփան Շարապովը, վորի տեսողությունն ավելի լավ եր, տեսավ, վոր նավը ծովում ե դեպի կղզին: Կես ժամից արդեն յերեվում էյին նավի վրայի մարդիկ: Յերեվում եր, թե ի՞նչպես մահույկ իջեցրին նավից: Մի քանի ըստեյից մահույկն արդեն ափի մոտ եր:

— Ի՞նչ մարդիկ եք, — լավեց մի կանչ մահույկից:

— Արիանգելսկից արհեստագործներ: Ազատեցե՛ք մեզ:

Մահույկի քիթը կպավ ափին, և ափ թռավ լոցմանը:

— Բարև ձեզ: Այդ ի՞նչպես եք ընկել այստեղ:

— Յերկար պատմություն ե, հետո կպատմենք, միայն թե մեզ վերցրեք հետներդ, — ասացին ուրախությունից գրեթե լաց լինելով յեղջերոսյի մորթի հազած այդ յերեք մարդիկ:

— Լա՛վ, նստեցե՛ք, նավում կպատմեք ձեր արկածների մասին, — ասաց լոցմանը:

— Բայց բան-ման ունենք, — ասաց Խիմկովը, — ուզում ենք հետներս վերցնել:

— Լա՛վ, այդ ել կվերցնենք:

Սկսեցին խրճիթից դուրս քաշել յեղջերոսյի, արջի ու աղվեսի մորթիները և յեղջերոսյի ճարպի կտորները: Ընդամենը մոտ յերկու հարյուր մորթի կար և վաթսուն փութ ճարպ:

Իրենց հետ վերցրին նաև նետաղեղը, նետերը, նիզակները, տեղերը, վոսկրե ասեղները — բոլորը, ինչ վոր չինել էյին կղզում ապրած ժամանակում:

— Բայց ահագին բան ունեք, — ասաց լոցմանը, — մեկ անգամից չենք կարող փոխադրել:

— Չե՞ վոր վեց տարի յե, ինչ այստեղ ենք ապրում, — ասաց Խիմկովը:

— Ի՞նչպես թե վեց տարի, — զարմացած հարցրեց լոցմանը:

— Այո, ամբողջ վեց տարի: Պատրաստվում էյինք մեռնելու, բայց դուք յերեվացիք... Մեզ ազատեցիք:

Բոլոր մորթիներն ու ճարպը բարձեցին, և յերեք արհեստագործները սկսեցին հրաժեշտ տալ իրենց սառցե բանտին, ուր ապրել էյին վեց յերկար ու ձիգ տարի: Գնացին—Ճյոզոր վերիգլինի գերեզմանի վրա:

— Մնաս բարով, Ֆեդյա, — ասաց Խիմկովը ար-

ցունքն աչքերին:— Բոլորիցս յերիտասարդը դու եյիր, բայց քեզ վիճակված չեր տուն վերադառնալ... Մնաս բարով:

Այն նավը, վորի վրա ընկան յերեք դժբախտ արհեստագործները, պատկանում էր մի արխանդելսկիցի վաճառականի: Նավը այժմ Նոր Յերկրից Արխանգելսկ էր վերադառնում: Բայց քամին քշել էր դեպի Շպիցբերգեն: Դրա շնորհիվ ել ազատվեցին տարաբախտ ծովագնացները: Նավի տերը, լսելով Նիմկովների և Շարապովի պատմությունը, ասաց.

— Ձեզ Արխանդելսկ հասցնելու համար դուք ինձ կտաք ձեր ունեցած մորթիների և ճարպի կեսը:

— Թեկուզ բոլորը վերցրու, միայն թե հասցրու հայրենիքը, — ասացին յերեքը միասին:

— Լավ, տանելու համար ինձ 80 ոտբլի վճարեցեք:

1749 թ. սեպտեմբերի 28-ին նավը հասավ Արխանգելսկի: Այն լուրը, թե նավով գալիս են յերեք հոգի, վորոնք վեց տարի ապրել են Գրումանտում, արագորեն տարածվեց քաղաքում, ահագին ժողովուրդ հավաքվեց նավամատուցում: Նիմկովը և Շարապովը տեսան իրենց ծանոթներին, բոլորը համբուրվում, լաց եյին լինում և շնորհավորում ազատության համար: Պառավ Նիմկովան, լսելով, վոր վերադարձել են ամուսինն ու վորդին, վորոնք անհետ կորել եյին վեց տարի, վաղ ավեց դեպի նավամատուցը: Տեսնելով նավի վրա կանգնած ամուսնուն և վորդուն, նա կամուրջով վաղ ավեց դեպի նավը, բայց հետ յեկավ, ընկավ ջուրը և քիչ մնաց խեղդվեք: Ամբողջ Արխանդելսկը հետո յեկավ Նիմկովների խրճիթը՝ տեսնելու համար նրանց, վորոնք ամբողջ վեց տարի ապրել եյին Գրումանտում ցրտի ու խավարի մեջ: Նիմկովների և Շարապովի պատմությամբ հետաքրքրվեց նահանգապետը: Նա յերեքին ել կանչեց իր մոտ, հարկադրեց պատմել Գրումանտում անցկացրած կյանքի մասին: Այդ պատմու-

թյունն այնքան հետաքրքիր էր, վոր նահանգապետը վորոշեց հայր և վորդի Նիմկովներին Պետերբուրգ ուղարկել: Պետերբուրգում Նիմկովները յեղան Գիտությունների ակադեմիայում, գիտնականներին պատմեցին իրենց արկածների մասին, ցուրտ յերկրորդների բնության մասին: Բայց այն ժամանակվա ոռու գիտնականներն այնքան ել չհետաքրքրվեցին այդ պատմությամբ, նույնիսկ չուզեցին լսել Նիմկովներին, և միայն մի Ֆրանսիացի գիտնական, վորն այն ժամանակ Պետերբուրգումն էր, մանրամասն հարց ու վորձ արավ Նիմկովներին նրանց արկածների մասին և այդ բոլորը գրի առավ ու հետո սպազրեց Փարիզում:

Ներկայումս շատ բան է փոխվել նաև հեռավոր հյուսիսում: Ճիշտ է բեվեռային բնությունը մնում է առաջվա պես դաժան, կղզիները սառուցյալ ծովում սառուցյով և ձյունով են ծածկված, իսկ ծովի վրա սառցասարեր են լողում, բայց Նորհրդային իշխանության որոք կենդանանում է նաև անբարեհամբուրը, դաժան հյուսիսը: Այժմ խորհրդային իշխանությունը բեվեռային կղզիներում շինում է ավաններ, գիտական կայաններ, ռադիոկայաններ: Ամեն ամառ սառուցյալ ծովն են գնում սառցահատները, վորոնցով ծովային զազաններ են վորսում և զանափան ապրանքներ են փոխադրում հյուսիս: Շպիցբերգենում այժմ քարածուխ են հանում, այնտեղ տարին բոլոր շատ ժողովուրդ է ապրում, ավաններում ելեքտրականություն է վառվում, ռադիո կա:

Յեթե յերբեմն պատահում է, վոր մի վորեվե նավ ջարդում են սառուցյները, և արհեստագործները մնում են սառցե անապատում, ապա խորհրդային կառավարությունն արագ կերպով ողնություն է կազմա-

կերպում նրանց ազատելու համար: Խորհրդային օդա-
չուները փնտռում են նավաբեկյալներին, նրանց տեղը
ցույց են տալիս սառցահատներին կամ իրենք են իջ-
նում սառույցի վրա ու վերցնում աղետյալներին:

Բոլորը հիշում են չեչյուակինյանների փրկու-
թյունը: Սառուցյալ ծովի սառցե կապանքներից ազա-
տելու շատ ուրիշ դեպքեր ել են տեղի ունենում ամեն
ամառ հեռավոր հյուսիսում: Տարեց տարի դաժան
Սառուցյալ ծովն ավելի ու ավելի յե հնազանդվում
մարդուն:

ՀՀ Ազգային գրադարան

NL0937841


ԳԻՆԸ 65 4.

11

28585

13 ДЕК 1937

551



Н. К. ЛЕБЕДЕВ
АРХАНГЕЛЬСКИЕ РОБИНЗОНЫ
Гиз ССР Армении, Ереван 1937